ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2015 թ. հունվարի 14 **N 14- Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՒՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԳՐԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի փետրվարի 19-ի N 48-Լ հրամանով հաստատված՝ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն 01.07.2009-01.07.2010 թթ ընկած ժամանակահատվածում քանդվել է 150 քաղաքացիների սեփականություն հանդիսացող շուրջ 22.60 հա մակերեսով պտղատու այգիները , որոնք վերածվել են վարելահողեր: Պտղատու այգիները քանդելու և վարելահողեր դարձնելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր չեն ներկայացվել:

Արուճ գյուղական համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանը խախտել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9}-րդ և 54-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Արուճ գյուղական համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք մեկ հարյուր հիսուն հազար դրամ, որն ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005243119:
2. Սույն որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Արուճ գյուղական համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արուճ գյուղական համայնքի ղեկավար Բագրատ Մարտիրոսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով 10 օրվա ընթացքում:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ